ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

2016
ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Հարգելի՛ համաքաղաքացիներ,

2016 թվականն ամփոփում ենք նոր և համարձակ նախաձեռնություններով, ծավալուն նախագծերով և քաղաքային կառավարման ոլորտում որոշումների կայացման գործընթացին մեր համաքաղաքացիների ակտիվ մասնակցությամբ: Տարվա ընթացքում իրականացված բոլոր աշխատանքները հնարավոր եղավ կյանքի կոչել միայն համատեղ ջանքերի և փոխադարձ վստահության շնորհիվ: Ավանդական դարձած այս հաշվետվության միջոցով նպատակ ունենք մեկ անգամ ևս ընդգծելու, որ մենք հաշվետու ենք մեր համաքաղաքացիներին:

Նախորդ տարիներին իրականացված ծրագրերն այս տարի համալրեցինք նոր և լայնամասշտաբ նախաձեռնություններով. բարեկարգեցինք այգիներ, պուրակներ, փողոցներ ու բակային տարածքներ, կառուցեցինք նոր խաղահրապարակներ ու ժամանցի վայրեր: Շարունակեցինք կարգի բերել ու ավելացնել քաղաքային լուսավորությունը, ոռոգման ցանցերը, ընդլայնել ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները, և, իհարկե, կարողացանք վերանորոգել շենքեր, կրթության, մշակույթի ու մարզական օջախներ:

Տարվա ընթացքում կատարված բոլոր աշխատանքների հիմքում եղել է և շարունակում է մնալ մայրաքաղաքի համաչափ զարգացումը, արժանավայել քաղաքային միջավայրի ապահովումն ու մեր սերունդներին կանաչ Երևան ժառանգելու տեսլականը: Ուրախալի է, որ քաղաքում կատարվող դրական փոփոխությունները մեր համաքաղաքացիների համար ոչ միայն ակնառու, այլև «սովորական» դարձան: Այսօր արդեն մեզանից ոչ ոք այլևս չի պատկերացնում քաղաքային միջավայրն ու առօրյան առանց այդ փոփոխությունների և զարգացումների:

Մայրաքաղաք Երևանի սիրելի՛ բնակիչներ, համոզվա՛ծ եմ, որ հաջորդող տարիներին ևս նույն նվիրումով, սրտացավությամբ և հետևողականությամբ մենք միասին շարունակելու ենք կյանքի կոչել իրատեսական ծրագրեր՝ ապահովելով մայրաքաղաքի կայուն զարգացումը:

Երևանի քաղաքապետ՝
ՏԱՐՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Էրեբունի վարչական շրջանի սիրելի՛ բնակիչներ,

այս փոքրիկ ձեռնարկը, որում ներկայացված են մեր ձեռքբերումները, կատարած աշխատանքն ու 2016 թվականի ընթացքում իրականացված ծրագրերը, նպատակ ունի հիմնական գծերով ձեզ ներկայացնելու մեր հաջողությունները: Մեր անկեղծ ցանկությունն է, որ հետագա աշխատանքներում, շարունակելով հաշվի նստել ձեր կարծիքների ու դիտարկումների, ինչպես նաև մտահոգությունների ու հոգսերի հետ, վարչական շրջանի զարգացման համար անենք ավելին: Մեր աշխատակազմը պատրաստակամորեն ու ամենայն պատասխանատվությամբ է վերաբերվում իր առջև դրված խնդիրներին՝ ձգտելով անթերի լուծել դրանք: Ու երբ դրան էլ գումարվում է ձեր ջերմությունը, գնահատանքն ու մասնակցությունը՝ մեր ուժերն ու հնարավորությունները բազմապատկվում են: Փոխադարձ հարգանքի ու վստահության շնորհիվ է, որ ունենք օր օրի զարգացող վարչական շրջան, ու վստահեցնում եմ, որ այսուհետ ևս մեր աշխատանքները կշարունակեն հետապնդել բոլորիս հիմնական նպատակը՝ ավելի շենացնել ու ծաղկեցնել Էրեբունի վարչական շրջանը:

Էրեբունի վարչական շրջանի ղեկավար՝
Արմեն Հարությունյան

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

2016թ. Էրեբունի վարչական շրջանում իրականացվել են.

- փողոցների և բակերի ասֆալտապատում, ընդհանուր ծավալը՝ **74 000մ²,**
- եզրաքարերի փոխարինում՝ **540մ,**
- թեքահարթակների կառուցում և վերանորոգում՝ **31 հատ:**

Վարչական շրջանում ևս **17** հասցե ապահովվել է **11 025 մ** երկարությամբ լուսավորության ցանցով:

Սալիկապատվել է Տիգրան Մեծի պողոտան, Խաչիկ Դաշտենց փողոցը: Նոր հենապատ է կառուցվել «Լուսաղբյուր» հուշարձանի պուրակում, Սարի թաղի 5-րդ փողոցում:

Ոռոգման նոր ցանցի անցկացում

Խաչիկ Դաշտենց փող. «Լուսաղբյուր» հուշարձանի տարածքում, Գաջեգործների և Նուբարաշենի փողոցների, Այվազովսկի և Տիտոգրադյան փողոցների հատման մասերում անցկացվել է 200 գծմ ոռոգման ցանց:

Նոր կանաչ տարածքների ստեղծում և ձևավորում

Էրեբունի վարչական շրջանում ստեղծվել են նոր կանաչ գոտիներ, Խաղաղ Դոնի փողոցում և մի շարք բակային հատվածներում: Էրեբունի վարչական շրջանում դեկորատիվ տարբեր ծաղիկների միջոցով կատարվել են ձևավորման աշխատանքեր:

2016թ. ընթացքում տնկվել է **400** ծառ, **90 000** ծաղկասածիլ և վերանորոգվել **200մ** ոռոգման ցանց:



Վերանորոգվել է 50 մուտք.
Արցախի 1, Արցախի 1բ, Արցախի 28, Արցախի 10ա, Գ.Նժդեհի 58, Մուրացանի 109, Տ.Մեծի 59, Տ.Մեծի 5 նրբ., Տ.Մեծի 46, Նոր Արեշի 35փ. 127/2, Նոր Արեշի 35փ. 127/3, Էրեբունու 3, սէրեբունու 23, Էրեբունու 28, Էրեբունիու25, Էրեբունու 5, Աթոյան անց. 19շ., Աթոյան անց.21շ., Խ.Դոն 4շ., Խ.Դոն 5շ., Գաջեգործների 74/1, Գաջեգործների 74/2, Ավանեսովի 16, Ավանեսովի 26, Ավանեսովի 20, Ավանեսովի 8/3:

Հարթ տանիքի նորոգում՝ 7 140 մ²



Թեք տանիքի նորոգում՝ 5 167 մ²

Վթարային պատշգամբների ամրացում, նորոգում.
Արցախի փող.6տ.22, 13 բնակ., Տիգրան Մեծ փող.59 տ. 63,63ա բնակ., Տիգրան Մեծ փող.48 տ. 22 բնակ., Տիգրան Մեծ փող.74 տ. 5,6,7,8,17,17ա, 31,32,43 բնակ., Տիգրան Մեծ փող.74 տ. 27,28 բնակ., Տիգրան Մեծ փող.49 տ. 15 բնակ., Էրեբունի փող.23:տ.25 բնակ.:

Ջրթափ խողովակների նորոգում՝ 1 310 գծմ

Վերելակների նորոգում

իրականացված աշխատանքների հասցեները.u

Արցախի 8/4, Արցախի 8բ 4-րդ մուտք, Արցախի 20/1 1-ին մուտք,Աթոյան անց. 8շ.,Խ.Դոն 1շենք 2-րդ մուտք, Խ.Դոն 5 շենք 2-րդ մուտք, Խ.Դոն 5շենք 14-րդ մուտք, Խ.Դոն 23 շենք 2-րդ մուտք, Խ.Դոն 23 շենք 8-րդ մուտք, Խ.Դոն 31շենք 4-րդ մուտք, Խ.Դոն 23շենք 7-րդ մուտք:

Երեքունի վարչական շրջանում հիմնանորոգվել, բարեկարգվել և նկարազարդվել է 35 բակային տարածք:

Մանկական խաղերի տեղադրում – 13 բակ, 22 խաղ .

Բակերի ընթացիկ նորոգում

- Հիմնանորոգվել է 4 բակ, վերանորոգվել է 11 բակային տարածք,
- Խաղաղ Դոնի 5 շենքի բակում կառուցվել է նոր բակ, որը համալրված է ինչպես խաղային ատրակցիոններով, այնպես էլ հանգստի կազմակերպման հարմարավետ տաղավարներով ու նստարաններով:
- Կառուցվել է նոր ջրավազան՝ շատրվանով:

Մարզական խաղերի տեղադրում

Խաղաղ Դոնի փողոցի հ.5 շենքի բակին զուգահեռ տեղադրվել են տարբեր մարզական խաղեր, խաղերն են տեղադրվել նաև Արցախի պող. հ.1, Ավանեսովի փող. հ.20 շենքերի բակերում:

Փոքրիկ ֆուտբոլասերների համար

Մինի ֆուտբոլի դաշտի տեղադրում – Ավանեսովի փողոցի 2/1 շենքի բակում:

Նկարազարդում՝ 675 մ²

Վարչական շրջանի բակերում նկարազարդման աշխատանքներ են կատարվել ավելի քան 20 բակերում: Հեքիաթի ամենատարբեր հերոսների ու գունավոր պատկերների միջոցով բակերի ավտոտնակները վերածվել են գունավոր անկյունների:

Արտաքին լուսավորության ցանցի կառուցում.
Նուբարաշենի խճուղի, Աճեմյան փողոց 1, 2 նրբ.Նոր Արեշ 11փողոց (Մուրացանի փողոցից մինչև Աթոյան փողոց) Արցախի 8բ շենքի բակ, Արցախի 6բ շենքի բակ, Դավիթ Բեկի փողոց 1 նրբ.Մուշական 10-րդ փողոց, 5-րդ փողոց, 2-րդ փ. 1նրբ., 11փողոց, 7-րդ փողոց, 8րդ փողոց:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Սատար կանգնենք մեր զինվորների ընտանիքներին

Կազմակերպվել է **95** ծնողների այցելություն ԼՂՀ-ում և ՀՀ սահմանամերձ գոտիներում ծառայող ժամկետային զինծառայողներին:

Գերմանական Կարմիր Խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հետ համատեղ վարչական շրջանում բացվել է «Գթության խոհանոցի» արտագնա սպասարկման կենտրոն՝ **65** շահառուների համար: Վարչական շրջանի տարածքում հայտնաբերված անօթևանները տեղափոխվել են «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի անօթևանների կենտրոն:

«Ամերիկյան ավտոբուս» բարեգործական ծրագրի «Պարգևենք ժպիտ» շարժական ատամնաբուժարանը 3 ամիս շարունակ ծառայություններ է մատուցել վարչական շրջանի Վ. Տերյանի անվ. հ. 60, Հ. Կարապետնցի անվան հ. 6 և Վ. Համբարձումյանի անվ. հ. 17 դպրոցների ոչ միայն սոցիալապես անապահով, այլև անսկսած սոցիալական վիճակից՝ ատամների բուժման կարիք ունեցող աշակերտների համար:

Աջակցություն սիրիահայ ընտանիքներին

Իրականացվել է սիրիահայերի աջակցության ծրագիր՝ «Դու միայնակ չես», որի արդյունքում վարչական շրջանում բնակվող **44** սիրիահայ ընտանիքների տրամադրվել է պարենային աջակցություն, հագուստ, սնունդ, դեղորայք, մարզահագուստ, մանկական սնունդ, խնամքի և անկողնային պարագաներ:

Սուրբ Զատիկի առթիվ «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի շահառուների համար կազմակերպվել է միջոցառում, տրամադրվել է պարենային աջակցություն:

«Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոնի» շահառուներին տրամադրվել է աջակցություն՝ Բյուրականի աստղադիտարան գնալու նպատակով, կազմակերպվել է հյուրասիրություն: «Առաքելություն Հայաստան» ԲԿ շահառուներին նուևյնպես ցուցաբերվել է զգալի աջակցություն:

Նյութական և դրամական օգնություն է տրամադրվել սոցիալապես անապահով բազմաթիվ ընտանիքների: Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին:

2016թ. հունիս-օգոստոս ամիսներին Էրեբունի վարչական շրջանի միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ, սոցիալապես անապահով և բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան **160** դպրոցական 3 հերթափոխով իրենց ամառային արձակուրդի 20-օրյա հանգիստն անցկացրել են Կոտայքի մարզի Մարմարիկի «Հեքիաթների կիրճ» մանկական առողջարարական ճամբարում:

«Էրեբունի-Երևան 2798» տոնակատարության ընթացքում սոցիալապես անապահով **286** ընտանիքների տրամադրվել է կենցաղային տեխնիկա:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Առողջության պահպանում

Պետպատվերի շրջանակում բուժօգնության ցուցաբերում - 2016թ. Էրեբունի վարչական շրջանի սոցիալապես անապահով շուրջ չորս տասնյակ բնակչի տրամադրվել են պետական պատվերի շրջանակում վիրահատվելու և բուժվելու միջնորդագրեր:

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2016թ. ընթացքում վարչական շրջանի հ. 69 մանկապարտեզը հիմնանորոգվել է, հ.71 մանկապարտեզը մասնակի է հիմնանորոգվել: Հ.63 մանկապարտեզում սալիկապատվել է խոհանոցի հատակը, հ.64 մանկապարտեզում փոխվել են խմբասենյակների պատուհաններ, հ.66 մանկապարտեզում վերանորոգվել է մեկ խմբասենյակ, հ.67 մանկապարտեզում՝ ջեռուցման համակարգը, սննդամթերքի պահեստը, հ.70 մանկապարտեզում՝ խոհանոցը, հ.72 մանկապարտեզի տանիքն է վերանորոգվել, հ. 73 մանկապարտեզում՝ ջրագծերը, հ.հ 74, 75 մանկապարտեզներում վերանորոգվել են սանհանգույցները և խմբասենյակները: Վարչական շրջանի մանկապարտեզները համալրվել են նոր գույքով՝ մանկական սեղաններ, մանկական աթոռներ, երկհարկանի և եռահարկ մահճակալներ, սառնարան, սալօջախ, մանկական զգեստապահարաններ: Անվճար հիմունքներով վարչական շրջանի մանկապարտեզներ հաճախող երեխաների ցուցակային թիվն է՝ 2278: 2016թ. վարչական շրջանի մանկապարտեզներում կազմակերպվել և անցկացվել են հիշարժան օրերին, ազգային, եկեղեցական և ծիսական տոներին նվիրված միջոցառումներ:

Մ. Մալունցյանի անվան արվեստի դպրոց՝ մոտ **400** աշակերտ:
Չուխաջյանի անվան երաժշտական դպրոց՝ մոտ **440** աշակերտ:

Հունիսի 1-ից օգոստոսի 31-ը մեկնարկեցին Երևանի քաղաքապետի և Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի կողմից նախաձեռնվող ամենամյա «Երևանյան ամառ», «Ուրախ ամառ» բակային միջոցառումները: «Մանկական» զբոսայգում տեղի ունեցավ Վարդավառի տոն: «Եվրոպական ժառանգության օրեր» համաեվրոպական ամենամյա ծրագիրն իրականացավ Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարանում: Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում նշվել է Ուսուցչի օրը: Վարչական շրջանի չորս գրադարաններում նշվել է Գրադարանավարի օրը:

Էրեբունի վարչական շրջանում մարզադպրոց հաճախող սաների ցուցակային թիվը՝ **334**:
Շախմատի դպրոց հաճախող երեխաների ցուցակային թիվը՝ **210:**
Մարզական միջոցառումների կազմակերպում
Մարտի 15-23-ը «Երևանի Էրեբունու շախմատի մանկապատանեկան մարզադպրոցում» տեղի են ունեցել 4-րդ և 3-րդ կարգի որակավորման մրցաշարեր:

Մարտ ամսին անցկացվել են ՀՀ հանրակրթական դպրոցների սովորողների հանրապետական առաջին ուսումնամարզական խաղեր:

- Ապրիլ ամսին անցկացվել է ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկություն՝ 1-6-րդ դասարանների միջև:
- Մայիս ամսին անցկացվել է «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթը:
- Հունիս ամսին անցկացվել է «Առողջ սերունդ,պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային առաջնությունը:
- Հոկտեմբեր անցկացվել է նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

ՌԴ Դոնի Ռոստովի քաղաքապետարանի հրավերով Երևանի պատվիրակությունը Էրեբունի վարչական շրջանի ղեկավար Արմեն Հարությունյանի գլխավորությամբ սեպտեմբերի 8-12 Դոնի Ռոստովում մասնակցել է քաղաքի հիմնադրման 267-ամյակին նվիրված տոնական միջոցառումներին: Սեպտեմբեր ամսին Էրեբունի վարչական շրջանի ղեկավար Արմեն Հարությունյանն ընդունեց Ֆրանսիայի Վիեն քաղաքի քաղաքապետ Լևոն Ասկունցին: Էրեբունի վարչական շրջանի և Վիեն քաղաքի միջև համագործակցությունն ավելի ամրացնելու նպատակով կողմերը որոշել են հանդես գալ համատեղ մշակութային ծրագրով:

Տարվա ընթացքում վարչական շրջանի մի խումբ տաղանդավոր երաժիշտներ մասնակցել են միջազգային ամենատարբեր մրցույթների, որոնք տեղի են ունեցել Ռուսաստանի Դաշնությունում, Իտալիայում, Ֆրանսիայում, որտեղից վերադարձել են հաղթանակած: Էրեբունի վարչական շրջանը համագործակցում է ԼՂՀ Հադրութի շրջանի հետ: Տարվա ընթացքում իրականացված այցերի շրջանակում կյանքի են կոչվել բազմաբանույթ մշակութային, կրթական, սոցիալական ծրագրեր: ԼՂՀ Հադրութի շրջանին ցուցաբերվել է նաև տեխնիկական աջակցություն: Էրեբունի վարչական շրջանը համագործակցում է նաև ՀՀ Սյունիքի մարզի հետ:

2016 ԵՐԵԲՈՒՆԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Թեժ գիծ՝
+(374 11) 518-388
erebouni@yerevan.am

www.yerevan.am